



Համարը N 184-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2015.04.15/9(521) Հոդ.92
Ընդունող մարմինը Ֆինանսների նախարար
Ստորագրող մարմինը Ֆինանսների նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.04.2015

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 02.04.2015
Ստորագրման ամսաթիվը 02.04.2015
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Ծանուցում

Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից և տարածվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների հետևանքով առաջացող եկամտային հարկի վերադարձի վրա:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
 ՀՀ արդարադատության
 նախարարության կողմից
 9 ապրիլի 2015 թ.
 Պետական գրանցման թիվ 11815120

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

N 184-Ն

2 ապրիլի 2015 թ.
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8.2-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 205-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 9-րդ կետերով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել
 1) վարկառուի վճարած եկամտային հարկի վերադարձի դիմումի ձևը (Ձև N ԵՀՎ1)՝ համաձայն N 1 հավելվածի,
 2) եկամտային հարկի վերադարձ կատարելու մասին եզրակացության ձևը (Ձև N ԵՀՎ2)՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից և տարածվում է 2014 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների հետևանքով առաջացող եկամտային հարկի վերադարձի վրա:

Գ. Խաչատրյան

Հավելված N 1
 ՀՀ Ֆինանսների նախարարի
 2015 թ. ապրիլի 2-ի
 N 184-Ն հրամանի

Ձև N ԵՀՎ1

(տարածքային) հարկային տեսչություն

ԴԻՄՈՒՄ

Վարկառուի (համավարկառուի) վճարած եկամտային հարկի վերադարձի

Անհատ ձեռնարկատեր (տուտար) վարկառուի անուն, ազգանուն	ՀՎՀՀ
Անհատ ձեռնարկատեր (տուտար) համավարկառուի անուն, ազգանուն	ՀՎՀՀ
Ֆիզիկական անձ վարկառուի անուն, ազգանուն	ՀՕՀ
Ֆիզիկական անձ համավարկառուի անուն, ազգանուն	ՀՕՀ
ՀՀ-ում բնակության հասցե	
Կոնտակտային տվյալներ (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն)	
Դիմումի ներկայացման ամսաթիվ	

Խնդրում եմ 20__ թվականի _____ հաշվետու ժամանակահատվածում հիպոթեքային վարկի սպասարկման համար իմ կողմից վճարված տոկոսների դրամով նշված գումարի չափով վերադարձնել եկամտային հարկի գումարները՝

Բանկը, որին փոխանցվելու է վերադարձվող գումարը	Հաշվի համարը, որին փոխանց-վելու է վերա-դարձվող գումարը	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումը կատարած գործատուի անվանումը, ՀՎՀՀ	Եկամտային հարկի վճարված գումարը (դրամ)	Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարը (դրամ)

Ընդամենը				

Վերադարձման ենթակա գումարն արձանագրվել է կամերալ ուսումնասիրությամբ, վերադարձի ուսումնասիրությամբ, և (կամ) վերադարձի ստուգմամբ՝ իրականացված _____ 20 թ. N _____ հանձնարարագրով (անհրաժեշտն ընդգծել և լրացնել):

Եզրակացության կազմման ամսաթիվը _____ 20____ թ.

(Տարածքային) հարկային տեսչություն _____
(անվանումը)

(Տարածքային) հարկային տեսչության պետ _____
(անունը, ազգանունը և ստորագրությունը)